

3092

271

4-21

1909

19

# ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՈՒԽՏԻՆ

ԱՌԱՔԵԼՍԿԱՆ ԱԹՈՌՈՅ

ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

Ի ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱԶԷՄ



ՏՊԱԳՐԵԱԼ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

2018

271  
4-21

10001

271  
4-21

(2)

# ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՈՒԽՏԻՆ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՑ

ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

Ի ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԵՄ

(1909)

Գ Լ Ո Ւ Խ Ա

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Յօդուած 1. — ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ Միաբանութիւնը կը կազմուի Սրբոց Յակովբեանց Առաքելական Աթոռոյ Գահակալ Պատրիարքէն, որ Գլուխ է Միաբանութեան, և հետեւեալ կարգերէն, որք են՝

Եպիսկոպոսք	Թուով 5
Վարդապետք	» 40
Սարկաւազք	» 12
Դպիրք	» 12
Ժառանգաւոր աշակերտք	» 40
Քրճազգեաց եղբարք	» 80
Մայրապետ քորք	» 30
	<hr/>
	219

Ա. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ՅԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

Յօդ. 2. - Սրբոց Յակովբեանց Միաբանութեան անդամ ընդունուելու փափագող անձն պէտք է գրաւոր խնդիր մատուցանէ Ս. Պատրիարքին, ներփակելով իրեն մկրտութեան եւ պատուաստի վկայականները: Ընդունելութեան պայմաններն են. 1. Առողջ ըլլալ մարմնով. 2., 16էն մինչեւ 18 տարեկան՝ եթէ ժառանգաւորաց վարժարանի աշակերտութեան կուզէ մտնել ներկայացողը. 20էն մինչեւ 40 տարեկան և ամուրի կամ այրի՝ եթէ Գրձազգեցից կարգ ընդունուիլ կը փափագի. և 50էն մինչեւ 40՝ եթէ մայրապետ է. 3., բարեբարոյ վկայեալ և 4.՝ Միաբանութեան մէջ ու է գործով մը Ս. Աթոռոյ ծառայելու կարող և պատրաստական ըլլալ:

Յօդ. 3. - Երկրորդ յօդուածոյ մէջ նշանակեալ հանգամանք մասնաւոր վկայագրով ստուգուելէ և բժշկական մանրակրկիտ քննութեամբ հաստատուելէ յետոյ՝ ընտրելիին վարքն ու բարքը եւ յաջողակութիւնը հասկցուելու համար Տնօրէն ժողովոյ կողմէն փորձոյ կ'ենթարկուի վեց ամիս:

Յօդ. 4. - Ձկնի փորձոյ, ընտրելիին վկայագրերը և փորձոյ ժամանակ իր վրայ հսկող պաշտօնակալին տեղեկագիրը յատենի Տնօրէն ժողովոյ կը կարգացուի. եթէ ընդունելութիւնը որոշուի, «Միաբանական կանոնաց հնազանդութեամբ Ս. Աթոռոյ հաւատարմաբար ծառայելու» խոստմնագիր առնուելով ձեռքէն՝ Միաբանութեան Մայր տունարին մէջ անունը կարճանագրուի եւ անմիջապէս պաշտօնը պահանջուելով կը յանձնուի տեսչութեան խնամոց ուս կը պատկանի: Տեսչութիւնը՝ ի պահանջել հարկին ու է միաբանի փոփոխութեան պէտքը կը տեղեկագրեն կանխաւ Տնօրէն ժողովոյ և նորա խաւանութիւնը կ'ստանան:

ՄԵՏ. ԸՆԴՈՒՆԵԼ  
ՀԱՍՈՒ-ԱՐՄ. ՀԸԲ  
3994 67

Յօդ. 5. - Եթէ անդամակցութեան խնդրարկուն արդէն եկեղեցական դասէ է, առողջական, բարոյական և եկեղեցական վիճակի կանոնաւորութիւնը և գործելու կարող ըլլալը ստուգուելէն վերջը՝ երկու տարի ամբողջ փորձոյ կ'ենթարկուի և ապա նախընթաց յօդուածին համեմատ խոստմնագիր առնուելով ձեռքէն՝ կը վճռուի ընդունելութիւնն Միաբանական Ընդհանուր ժողովով:

Բ. ՊԱՐՏՔ ԵՒ ԻՐԱՒՈՒՆՔ ՄԻԱԲԱՆԻՑ

Յօդ. 6. - Միաբանը պարտին իւրաքանչիւրն իւր կարողութեան չափով ծառայել Ս. Աթոռոյ: Այն միաբանը որ պաշտօնի կը կոչուի և առանց օրէնսոր պարտաւորուենալու կը մերժէ զայն և կը զլանայ իր ծառայութիւնը՝ պարտազանց կըլլայ և պատժապարտ:

Յօդ. 7. - Միաբանը իրաւունք ունին Ս. Աթոռէն ընդունիլ Ա. Բնակարան, անառ, իսկ Սարկաւազունք, Դպիրք, ժառանգաւորք և Գրձազգեացք նաև հափուս, ինչպէս նաև Եպիսկոպոսք և վարդապետք իրենց անձնական մանր ծախքն հոգալու համար՝ Միաբանական անունով տարեկան մը, որ անձնիւր կարգի և աստիճանի բաժանում ունի, և պաշտօնեակն անունով տարեկան մը, որ իւրաքանչիւր պաշտօնի յատկացած ըլլալով կը տրուի պաշտօնակալաց. - Բ. Հիւանդութեան ժամանակ դարման և ծերութեան ժամանակ խնամք, զորս Տնօրէն ժողովը մասնաւոր հոգածութեամբ ՚ի գործ կը դնէ առ հասարակ բոլոր Միաբանից կացութիւնը բարոքելոյ և գանձը զոհ և մխիթարեալ պահելու համար: - Գ. Ուսման և դաստիարակութեան անոնք որ յարմարութիւն ունին և ՚ի մասնաւորի անոնք որ եկեղեցականութեան կը պատրաստուին: - Դ. Եկեղեցական կարգ և սուրբ Առիճան՝ անոնք միայն որ արժանաւորա-

ԱՅ

Բէւն և փոփոք ունին, և որոց զանազան աստիճանի բարձրացումն՝ Լուսարարապետի, Դպրոցաց տեսչի և ոչ ժողովական երկու ձեռնհաս եկեղեցական Միաբանից քննութեան տեղեկագրոց վրայ Տնօրէն ժողովը կառաջարկէ Միաբանական Ընդհանուր ժողովոյ որոշման: Իսկ եպիսկոպոսացուներու ցանկը ուղղակի Տնօրէն ժողովը կը ներկայացնէ և Միաբանական Ընդհանուր ժողովով կ'որոշուի:

Միաբանական Ընդհ. ժողովը ազատ է Տնօ. ժողովոյ ներկայացուցած ցանկէն դուրս արժանաւորագունին տալ իւր քուէն:

Յօդ. 8. - Միաբանք ազատ են իրենց անձնական դրամով իրենց անձին յատուկ անշարժ կալուած գնելու կամ կառուցանելու, միայն թէ այդ կալուածը եթէ Վաֆֆ գետին է, պէտք է պատկանի միմիայն եւ անպատճառ Երուսաղէմի Վաֆֆին, իսկ եթէ զուտ (սւրֆ) Միւլ է, Միաբանք պարտին նախապէս Նեֆէ Միւլի հէօձէթով և կամ օրինաւոր Վաֆֆէթով վանքին Վաֆֆ ընելով հաստատել ըստ տիրող օրինաց Տէրութեան՝ թէ յետ մահուան Ս. Երուսաղէմի Աթոռն միակ ժառանգն ու տէրն է այն կալուածին:

Եթէ Միաբանք ուզեն անշարժ կալուած գնել կամ կառուցանել, կը պարտաւորին կանխաւ զեկուցանել Ս. Աթոռոյն և Ս. Պատրիարքի հրամանաւ կատարել վերոյնշանակեալ օրինական գործողութիւններն. հակառակ պարագային պարտազանց կը նկատուին:

#### Գ. ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԻՒՆ

Յօդ. 9. - Որ և է Միաբան կրնայ ամբաստանութեան ենթարկուիլ, բայց ամբաստանութիւնը նկատողութեան առնուելու համար պէտք է որ՝ Ա. բացորոշ կերպիւ բացատրուած ըլլայ ամբաստանագիրը, Բ.

ստորագրուած գէթ երկու Միաբաններէ՝ եթէ ամբաստանեալն աշխարհական կարգէ է, երեք եկեղեցական Միաբաններէ՝ եթէ Սարկաւագ կամ Վարդապետ է, և հինգ՝ եթէ Եպիսկոպոս է:

Աշխարհական (քրճագետաց) միաբանից վրայ եղած ամբաստանութիւնք Տնօրէն ժողովոյ մէջ, իսկ եկեղեցականաց վրայ եղած ամբաստանութիւնք Միաբանական Ընդհանուր ժողովոյ մէջ կը քննուին և վճիռ կը տրուին ըստ 17-18 յօդ:

#### Դ. ԱՌԺԱՄԵԱՅ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԻՒՆ

##### Ի ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆԱՅ

Յօդ. 10. - Որ և է Միաբան իրաւունք ունի առժամապէս բացակայիլ Միաբանութենէն կամ Ս. Յակովբեանց Աթոռէն հետեւեալ պայմաններով.

Ա. երբ Միաբան մը այնպիսի հիւանդութեան կեն թարկուի որ չ'ներեր նմա շարունակել Միաբանական պարտաւորութիւնները և մնալ Ս. Յակովբեանց վանքին մէջ ու կը կարօտի օգափոխութեան՝ ի հեռաւոր վայրս:

Բ. երբ Միաբանը արդէն ծառայած է Ս. Աթոռոյն առ նուազն երեք տարի՝ եթէ ժառանգաւորաց Վարժարանի աշակերտելով ուսմունքն աւարտած է և չէ ուզեր կամ յարմար չէ դատուեր եկեղեցական կարգը մտնելու, եւ տասն տարի՝ եթէ եկեղեցական դասէն է: Սոյն պարագայից մէջ ծառայութեան տարիները կը հաշուին ժառանգաւորաց համար՝ վարժարանէն ելլելով Դպրաց կարգը մտած օրէն սկսեալ, եկեղեցականաց համար՝ գտնուած աստիճանը ընդունած օրէն սկսեալ, իսկ դուրսէն եկած եկեղեցականներուն համար՝ Միաբանութեան մէջ ընդունուած օրէն սկսեալ:

Յօդ. 11. - Մի և միւս պայմաններով բացակայիլ ուզող Միաբանք խնդրագիր կը մատուցանեն Ս. Պատ-

րիարքին, որ առ առաւելն մէկ ամսուան մէջ պէտք եղած հետազոտութիւնն ընել տալով՝ եթէ իրաւացի գտնէ՝ Տնօրէն ժողովով կը վճռէ մեկնումը, եթէ քրճազգեաց ոք է կամ դպիր. իսկ եթէ Եկեղեցական դասէն է, տեղեկագրութեամբ ներկայացնելով խընդիրը Միաբանական Ընդհանուր ժողովոյ, անոր որոշման կ'ենթարկէ:

Յօդ. 12. - Բացակայութեան հրաման առնող Միաբանը պարտի իր հաշիւներն ու պաշտօնավարութեան համարը կատարելագէտ տալ և ապա մեկնիլ:

Յօդ. 13. - Բացակայող Միաբանները պարտին խոստումնադրով յանձն առնուլ՝ 1. Ս. Աթոռոյ կողմէն որ և է պարագայի մէջ իրենց յանձնարարեալ ծառայութիւնները յօժարակամ կատարել, պայմանաւ որ սոյն ծառայութիւնք կարենան համաձայնիլ իրենց վերջէն ստանձնած Ազգային հրապարակական պաշտօնի կատարման հետ՝ եթէ ունին. 2. Յետ հնգամեայ բացակայութեան եթէ Ս. Աթոռը կոչէ զիրենք իր անմիջական ծառայութեան պարտաւոր ըլլան իսկոյն վերադառնալ. հակառակ պարագային տնօրէնութիւնը կը յանձնուի միաբ. ընդհ. ժողովոյ:

### Ե. ԱՐՏԱՒՍՈՒՄՆ Ի ՄԻԱԲԱՆՈՒԹԵՆԷ

Յօդ. 14. - Այն ամեն Միաբանք որ կանոնաց անստեղծով անվայել վարք կունենան կամ անհաւատարիմ կը գտնուին և կամ առանց օրինաւոր պատճառի իրենց յանձնուած պաշտօնը կը մերժեն կամ խոյս կուտան անկէ, կարտաքսուին Միաբանութենէն հետեւեալ պայմաններով, Ա. Սոյն տեսակ յանցապարտ Միաբանը նախ իր անմիջական մեծէն յուզղութիւն կը յորդորուի երկիցս և երիցս, և եթէ անուղղայ մնայ, գանգատագրով կը ներկայուի Տնօրէն ժողովոյ, որ առ

առաւելն մէկ ամսուան մէջ պէտք եղած քննութիւնն ընելով կուտայ իր վճիռը, և յորդոր կամ պատիժ ինչ որ արժան է և պատշաճ՝ ի գործ կը դնէ զնա՝ ի կարգ բերելու:

Բ. իսկ եթէ յանցապարտը դարձեալ շարունակէ իր ընթացքը՝ Տնօրէն ժողովը դատաստանաւ կը վճռէ անոր արտաքսումը եթէ Դպիր, կամ Քրճազգեաց կամ Մայրապետ է և Ս. Պատրիարքը կը գործադրէ. իսկ եթէ Եկեղեցական ոք՝ մասնաւոր տեղեկագրութեամբ անոր արտաքսումը կ'առաջարկէ Միաբանական Ընդհանուր ժողովոյ, որ քննութեամբ կամ վիճարանութեամբ արտաքսումը կորոչէ և Ս. Պատրիարքը կը հաստատէ:

Յօդ. 15. - Արտաքսեալ Միաբանը նախ պարտի իր հաշիւն ու համարը կատարելագէտ տալ, և ապա իր անձին սեփական գոյքն առնելով հեռանալ Միաբանական Ուխտէն և նաեւ Ս. Երուսաղէմէն՝ եթէ եկեղեցական կարգէն է: Եթէ արտաքսեալ Միաբանը ո և է անչարժ կալուած ունի յանուն Ս. Աթոռոյ, կանոնաւորապէս անոր վարձքը ցմահ կ'ստանայ ուր ուրեք որ գտնուի, առանց սակայն այդ կալուածին փոխարժէքը պահանջելու իրաւունք ունենալու:

Միաբան մը ինչ պատճառաւ ալ որ հանուած կամ արտաքսուած լինի և ուր ալ որ գտնուի՝ իրաւունք ունի իւր կալուածոց եկամուտները ստանալու կանոնաւորապէս և անբռնաբարելի է: Միաբանութիւնը արտաքսեալ միաբանի մը կալուածները արգելքի տակ առնելու իրաւունք չ'ունի\*):

\*) Մանօթ Սոյն յօդ. դրուած է Միաբանութիւնը քաջալերելու և վստահացնելու համար, որպէս զի ըստ առաջնոյն Ս. Աթոռոյ կալուածները շատցնելու շահադիր լինին:

Յօդ. 16. - Այն Միաբանները, որք կամ կը բացա-  
կային Միաբանական կեանքէ և կամ Ս. Աթոռոյ թոյլ  
տուութեամբ Ազգային պաշտօնի կը կոչուին (յօդ.  
13-14), բայց իրենց խոստմանց դրժեւով չեն կատա-  
րեր խոստմագրով յանձնառեալ պայմանները, եւ  
կամ իրենց վարուք եւ գործովք անպատուութիւն  
կը բերեն Ուխտին՝ որոյ անդամ են, և յետ երկիցս  
և երկիցս յորդորուելու՝ անուղղայ կը մնան, Տնօրէն  
ժողովոյ ամբաստանական տեղեկագրոյն վրայ Միա-  
բանական Ընդհանուր ժողովն յետ քննութեան կար-  
տասանէ արտաքսուումը և Ս. Պատրիարքը կը հաստատէ  
և կը գործադրէ :

Յօդ. 17. - Արտաքսեալ Միաբանից անուններն և  
պատճառները կը նշանակուին Միաբանութեան Մայր-  
Տումարին և առ Ազգային Երեսփոխանական ժողովն  
մատուցուած տարեկան տեղեկագրութեան մէջ, եւ  
եկեղեցական արտաքսելոց համար ամեն անգամ եւ  
անմիջապէս Տեղեկագիր կը տրուի նաեւ Ազգային  
Պատրիարքարանի և Արարատեան Մայր-Աթոռոյ :

Միաբանական Ընդհ. ժողովոյ վճռով արտաքսեալ  
Միաբան մը իրաւունք չունի այլ եւս յորջորջուելու  
« Միաբան Ս. Յակովբեանց Ուխտին » :

## 2. ՎԱԽՃԱՆ ՄԻԱԲԱՆԻՑ

Յօդ. 18. - Որ և է Միաբան թէ վանքին մէջ և թէ  
Երուսաղէմի վիճակներէն դուրս տեղեր վախճանած  
ժամանակ, բոլոր գոյքը՝ ի գիր կառնուին եւ հաշիւ-  
ները տեսնուելով կը կարգադրուին Տնօրէն ժողովոյ  
կողմէ :

Յօդ. 19. - Վախճանեալ Միաբանից օրինաւոր ժա-  
ռանգը Ս. Աթոռն ըլլալով, անոնց գոյքէն Ս. Աթո-  
ռոյն և այլոց վերաբերեալ և պատահապէս իրենց քով

գտնուած գրամ, անօթ, զգեստ, գիրք և այլն՝ իրենց  
տեղը կը յանձնուի, և աւելցածը Ս. Աթոռոյ կանցնի  
կանոնաւոր արձանագրութեամբ՝ ի յիշատակ նոցա ա-  
նուան, Մի և նոյն կը գործադրուի նաեւ Լուսարա-  
րապետի մահուան ատեն նորա սենեկի եւ սեփական  
գոյից նկատմամբ, սակայն անմիջապէս՝ ըստ սովորու-  
թեան՝ Ս. Յակովբայ Աւանդատան դուռը կը կնքուի  
և բանալիները կնքոյ ներքեւ կը պահուին (յօդ. 49) :  
Դսկ Պատրիարքի վախճանման ատեն վախճանելոյն  
և պատրիարքարանի գոյից քննութիւնը ու ցուցա-  
կագրութիւնը Միաբանական Ընդհանուր ժողովով  
ընտրեալ Գննիչ Մասնախմբի մը գործակցութեամբ  
կը կատարուի (յօդ. 24) :

## Գ Լ Ո Ւ Խ Բ .

### ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Յօդ. 20. - ՄՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ Առաքելական  
Աթոռոյ Վարչութիւնը յանձնուած է Երուսաղէմի  
Ս. Պատրիարքին, որ կը գործէ օրինաց սահմանին  
մէջ ըստ տրամադրութեան սոյն կանոնագրոյ՝ աջակ-  
ցութեամբ Միաբանութեան եւ գործակցութեամբ  
Տնօրէն ժողովոյ :

Պատրիարք և Միաբանութիւնը համարատու են առ  
Ազգն՝ Կ. Պոլսոյ Երեսփոխանական ժողովոյն միջոցաւ  
՝ ի ձեռն Ազգային կեդրոնական Վարչութեան և Ս.  
Նախագահի նորին :

### Ա. ՄՐԲԱՉԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ

Յօդ. 21. - Պատրիարքը Մրբոց Յակովբեանց Առա-  
քելական Աթոռոյն ցկեանս Գահակալն է, Գլուխ հո-

մանուն Միաբանութեան, Նախագահ Միաբանական  
Ընդհանուր և Տնօրէն Ժողովոց և Պետ՝ Գործադիր  
Իշխանութեան :

Յօդ. 22. - Պատրիարքին պաշտօնն է միանգամայն  
և պարտաւորութիւնը՝ Միաբանութեան կանոնադրին  
ճշդիւ հետեւողութեամբ

Ա. Կառավարել հայրաբար Միաբանական Ուխտն  
եւ օր աւուր բարեկարգութեամբ եւ գիտութեամբ  
առաւել զարգացմանն հոգ տանիլ,

Բ. Տնօրինական Ս. Տեղեաց և այլ Ուխտատեղեաց  
նկատմամբ Ազգային սեփականութեանց և արտօնու-  
թեանց անկորուստ և պայծառ պահուելուն հսկել,

Գ. Ս. Աթոռոյ սեփական Վանօրէից և կալուածոց  
պահպանութեան և բարգաւաճման հոգ տանիլ,

Դ. Սոյն հաստատութեանց շնորհիւ և Ս. Աթոռոյ  
կարողութեան չափով՝ Ազգային դաստիարակութեան  
ծաւալման օժանդակել,

Ե. Ս. Աթոռոյ թեմական ժողովրդոց հոգեւոր խնամք  
տանիլ,

Զ. Եւ՝ իբր միջնորդ Միաբանական յարաբերութեանց  
ընդ՝ ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնն, պարտու-  
պատշաճ մեծարանք ընծայել առ Մայր-Աթոռն Ա-  
րարատեան : Ազգային Կեդրոնական Վարչութեան ա-  
ջակցութեամբ՝ հսկել Ս. Աթոռոյ իրաւանց եւ պար-  
տուց վրայ, համաձայն կանոնադրիս և ազգային Սահ-  
մանադրութեան : Խաղաղութիւն ունենալով հանդերձ  
ընդ Օտարազգի Քրիստոնեայ Միաբանութիւնս՝ հսկել  
անկորուստ պահելու Ազգին իրաւունքն և անաղարտ՝  
Միաբանութեան պատիւն, անվթար պահել հրովար-  
տակօք շնորհեալ և վաւերագրովք հաստատեալ ա-  
ռանձնաշնորհութիւններն, արտօնութիւններն և ա-  
ւանդական հնամենի սովորութիւններն, վայելուչ յա-  
րաբերութեամբք թէ ընդ Նախարարս, թէ ընդ բարձ-

րագոյն պաշտօնակալս և թէ ընդ տեղական Կառավա-  
րութիւնն :

Յօդ. 23. - Երբ Ս. Երուսաղէմի Պատրիարքական Ա-  
թոռը որ և է պատճառաւ թափուր մնայ, Պատրիար-  
քական Փոխանորդը Տնօրէն Ժողովոյ հետ խորհրդակցու-  
թեամբ Միաբանական Ընդհանուր Ժողով գումարել  
փութալով՝ ընտրել կուտայ .

Ա. Երեք անձերէ բաղկացեալ Քննիչ Մասնախումբ  
մը, որ պաշտօն ունի Տնօրէն Ժողովոյ հետ Պատրիար-  
քի գոյքն եւ ընդհանրապէս Պատրիարքարանի մէջ  
գտնուած ամեն բան ՚ի գիր առնուլ եւ ցուցակաւ  
Տնօրէն Ժողովոյն յանձնելով՝ տեղեկագիր մատուցա-  
նել Միաբանական Ընդհանուր Ժողովոյն (յօդ. 19-20) .  
եւ անմիջապէս տեղեկագրել Ազգային Կեդրոնական  
Վարչութեան . իսկ Տնօրէն Ժողովը Պատրիարքարանը  
կնքոյ տակ կը պահէ մինչ ցգահակալութիւն նոր Պատ-  
րիարքի, և

Բ. Պատրիարքական Տեղապահը՝ որ քուէից բացար-  
ձակ առաւելութեամբ կընտրուի միանուն քուէով և  
Միաբանական Ընդհանուր Ժողովն հանրագրով մը նորա  
ընտրութիւնը կիմացնէ Ազգային Կեդրոնական Վար-  
չութեան, որու միջոցաւ ընտրութեան պաշտօնագը-  
րոյն հասնելէն յետոյ կը վարէ իր պաշտօնը :

Յօդ. 24. - Պատրիարքի վախճանման պատճառաւ  
ընտրուած տեղապահին պաշտօնն է՝ Պատրիարքի ընտ-  
րական գործողութեանց նախագահել, և մինչեւ ցգա-  
հակալութիւն նորընտիր Պատրիարքի՝ անոր վարչական  
պաշտօնը վարել ըստ կանոնադրի Միաբանութեան :

Յօդ. 25. - Ս. Երուսաղէմի Առաքելական Աթոռոյ  
Պատրիարքն Ազգային Երեսփոխանական Ժողովով  
կընտրուի Միաբանութեան ներկայած ընտրելեաց մէ-  
ջէն, որոց ցուցակը կը պատրաստուի հետեւեալ կեր-  
պիւ .

Նախ՝ Միաբանական ընդհանուր ժողովը կը գումարուի՝ Միաբանութեան «ճիշտ» Եկեղեցական անդամոց երկու երրորդ մասին մասնակցութեամբ ընդ Նախագահութեամբ Պատրիարքական Տեղապահին, որ կը յիշեցնէ ժողովականաց Պատրիարքական ընտրելութեան արժանաւորութեան հանգամանքը և կը հրաւիրէ զնոսա խղճի մտօք կատարել իրենց ընտրութիւնը:

Իւրաքանչիւր ընտրողը թուղթի վրայ կը գրէ անունները այն ամեն Միաբան Եպիսկոպոսաց և Վարդապետաց, որ երեսուն և հինգ տարին լրացուցած և Օսմանեան Տէրութեան հպատակ ըլլալով, ըստ իւր խղճի՝ կրօնական, բարոյական ուսումնական և բարեմասնութեամբ արժանի են Պատրիարքական Գահը բարձրանալու:

Քուէհամար կը կատարուի սոյն քուէից և առաւելագոյն քուէ ստացող անուններէն քուէից առաւելութեան կարգաւ եօթն անձինք որոշուելով՝ Առաջին ցուցակ մը կը պատրաստուի Եօթն ընտրելեաց:

Սոյն եօթն ընտրելեաց առաջին ցուցակի պատրաստութեան կրնան նաեւ մասնակցիլ գրով՝ ի հեռաւորս գտնուող Միաբանք որոց կանխաւ պաշտօնագիր կ'ուղղուի Տեղապահի կողմէ:

Ժողովականք երկրորդ անգամ՝ քուէարկութեան կը հրաւիրուին՝ սոյն Եօթն ընտրելեաց ցուցակին մէջէն միայն երեք անձի վրայ քուէնին ամփոփելու պայմանաւ և քուէհամար կատարուելով՝ Երկրորդ ցուցակ մը կը պատրաստուի Երեք ընտրելեաց՝ իւրաքանչիւրին ընդունած քուէից առաւելութեան կարգաւ, իսկ եթէ երկու ընտրութեանց ժամանակ հաւասար քուէներ պատահին՝ վիճակաւ կորոշուի ընտրելին և սոյն երեք ընտրելեաց ցուցակը իրր Արժանաւորագրուէն ընտրելեաց ցուցակ հանդերձ առաջին Եօթն ընտրելեաց ցուցակաւ և իւրաքանչիւր ընտրելոյ անցեալ պաշտօնավարութիւնը

նկարագրող տեղեկագրով կը ներկայացուի Ազգային Երեսփոխանական Ընդհանուր ժողովոյ, որ անոց հէջն կընտրէ զՊատրիարքն Ս. Երուսաղէմի, Կ. Պոլսոյ Պատրիարքի ընտրութեան տրամագրութեան համեմատ:

Յօդ. 26. - Նորընտիր Պատրիարքն եթէ Վարդապետ է, Միաբանական ընդհանուր ժողովոյ վկայականով, և Կ Պոլսոյ Պատրիարքի յանձնարարականով Ս. Էջմիածին կուղեւորի, և Եպիսկոպոսութեան աստիճանի կը բարձրանայ, և ՚ի վերադաձին յատենի Սրբոց Յակովբեանց տաճարին և ՚ի ներկայութեան Միաբանական Ընդհանուր ժողովոյ հանդիսաւորապէս ուխտ ընելով «հաւատարիմ մնալ Տէրութեան, Ազգին և Ս. Աթոռոյն Երուսաղէմի, և հսկել անթերի գործադրութեան կանոնագրի Միաբանութեան» կը բազմի յԱթոռ Պատրիարքական, և կը տեղեկացնէ առ Ազգային Վարչութիւնն իւր ուխտին կատարումն:

Իսկ եթէ Եպիսկոպոս է, ընդունելով իւր ընտրութեան և հաստատութեան պաշտօնագրերն՝ կը կատարէ վերոյիշեալ ուխտն և կը բազմի յԱթոռ Պատրիարքական:

Ս. Եկեղեցեաց մէջ Պատրիարքի անուան յիշատակութիւնը կսկսի իր ուխտի կատարումէն անմիջապէս յետոյ:

### Բ. ՏՆՕՐԷՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 27. - Տնօրէն ժողովը կը կազմուի՝ չըջանաբար փոփոխելի եօթն անդամներէ:

Յօդ. 28. - Տնօրէն ժողովոյ անդամ կընտրուին եկեղեցական Միաբաններէն բանիբուն և փորձառու անձինք, որք 30 տարին լրացուցած են և ունենան ամբաստանութեան ներքեւ չ'են ինկած:

Յօդ. 29. - Տնօրէն ժողովոյ եօթն անդամները կընտ-

րուին չորս տարուան համար Միաբանական Ընդհանուր Ժողովէն եռապատիկ, սղատ քուէով և առանց ցանկի :

Երբ սոցա պաշտօնավարութեան քառամեայ շրջանը լրանայ նոր ընտրութիւն կը կատարուի ըստ վերնոյն : Վախճանմամբ, հրաժարմամբ կամ ուրիշ պատճառներով Տնօրէն Ժողովոյ անդամներէն երբ պակսելու ըլլան, Միաբանական Ընդհանուր Ժողովը կը ընտրէ նոր անդամներ, որոց պաշտօնավարութիւնը կաւարտի նոյն շրջանին հետ : Դադարեալ անդամք միշտ վերընտրելի են :

Յօդ. 30 - Տնօրէն Ժողովը կանոնաւորապէս շաբաթը երկու, իսկ ստիպողական հարկին աւելի նիստ կընէ ընդ նախագահութեամբ Ս. Պատրիարքին և 'ի բացակայութեանն՝ Պատրիարքական Փոխանորդին : Ժողովը կը կառավարուի իր Դիւանէն՝ կազմեալ մէկ Ատենապետէ եւ մէկ Ատենադպրէ, զորս իր մէջէն կընտրէ երկու տարի պաշտօն վարելու պայմանաւ և վերընտրելի են :

Յօդ. 31 - Տնօրէն Ժողովոյ պաշտօնն է՝ Ս. Աթոռոյ պաշտօնատարաց կողմէ ներկայացեալ գործերը տնօրինել, նախապէս ստանալով անոնց կարծիքն ու դիտողութիւնն :

Ս. Աթոռոյ պաշտօնատարաց ընտրութիւնները կատարել :

Վարչական հրահանգները եւ տնօրէնութիւնները սահմանել, առ հասարակ բոլոր պաշտօնէից և Տեսչութեանց գործառնութիւններուն մօտէն հսկել, և 'ի հարկին Քննիչ ղրկել :

Ամեն տարի Ս. Զատիկի տօներէն վերջ Լուսարարապետի հետ, երկու իր մէջէն և երկու Միաբանութեանէն ընտրած մասնախմբի մը միջոցաւ քննել եւ ստուգել Ս. Յակովբայ Աւանդատան մէջ և ղուերները գըտ-

նուած բոլոր Սրբութեանց, անօթոց, զգեստուց և այլն վիճակը և արձանագրութիւն կազմելով ստորագրել ու թողուլ Լուսարարապետի քով և օրինակը անցնել Տնօրէն Ժողովոյ ատենագրութեանց մէջ :

Տնօրէն Ժողովն առ Միաբանական Ընդհանուր Ժողովն կատարած տարեկան համարատուութեան մէջ, այս կատարուած գործողութիւնը կը ներկայացնէ : Այս քննութիւնը ուրիշ ժամանակներ ալ 'ի հարկին կարելի է կատարել :

Եւ 'ի մի բան, տնօրինել այն ամեն գործերն, որք իւրաքանչիւր պաշտօնատարի իրաւասութեանէն վեր կը դատուին :

Նոյնպէս Տնօրէն Ժողովոյ պաշտօնին կը պատկանի, հաւանութեամբ միշտ Ս. Պատրիարքին, ելմտացոյցով նախատեսեալ բացը գոցելու համար, միայն եթէ հարկ ըլլայ, փոխառութեան պէտքն ու պայմանները սահմանել, իսկ անկէ աւելի պէտքին համար Միաբանական Ընդհանուր Ժողովոյ դիմել, և 'ի դէպս մահուան Միաբանից՝ նոցա սեփական գոյից վրայ կանոնական տրամագրութիւնն 'ի գործ դնել :

Յօդ. 32. - Տնօրէն Ժողովը ամեն ամսագլուխ պաշտօնէից հաշիւները կը քննէ, նոյնպէս ամեն ամսագլուխ Ս. Աթոռոյ Ելեւմտից վիճակը ստուգելով և ուզած ատեն դրամարկեղ վիճակը քննելով՝ հարկաւոր տնօրէնութիւնները կընէ, Տնօր. Ժողովը եռամեայ հաշիւը կը մատուցանէ Միաբ. Ընդհ. Ժողովոյ ամեն տարեգլուխ անցելոյն հաշիւները կը փակէ և յաջորդին ելմտացոյցը կանխաւ յարդարելով՝ բացատրական տեղեկագրութեամբ կը ներկայացնէ Միաբանական Ընդհանուր Ժողովոյ :

Յօդ. 33. - Տնօրէն Ժողովն համարատու է առ Միաբանական Ընդհանուր Ժողովն, առ որ կը կատարէ համարատուութիւն տարեկան Տեղեկագրութեամբ, որ

պատրաստուած պէտք է ըլլայ առ առաւելն մինչեւ Յունիսի վերջը . հակառակ պարագային պարսաւանաց կ'ենթակուի :

Տարեկան Տեղեկագրութեան մէջ խնամով կը նշանակէ .

Ա. Միաբանական անդամոց ընթուներութեան պաշտօնավարութեան , սահմանուած հրահանգներու , հաւատարիմ ծառայութեանց համար եղած վարձատրութեանց , հրաժարման և մահուան վերաբերեալ տնօրէնութիւններն :

Բ. Միաբանական անդամոց ուսումնական յառաջդիմութեան և ընդհանրապէս Ազգային դաստիարակութեան նկատմամբ գործադրուած միջոցներն և արդիւնքը :

Գ. Տնօրինական Ս. Տեղեաց և այլ Ուխտատեղեաց մէջ Օտարաց հետ ընկերովի և առանձինն Ազգային արտօնութեանց և սեփականութեանց մասին պատահած նշանաւոր դէպքերն և ասոնց նկատմամբ ընդ Ազգային Կեդրոնական Վարչութեան , ընդ Տեղական կառավարութեան , ընդ Քրիստոնեայ Օտարազգիս և ուղղակի ընդ Նախարարս Տէրութեան կամ այլ պաշտօնակալ տեղի ունեցած յարաբերութիւնն և արդիւնքը :

Դ. Բողոքեալ տարւոյն ելմտական ճշգրիտ վիճակն բողոքատմամբ ենթադրեալ ելմտացոյցի և 'ի մասնաւորի փոխառութեանց և կալուածական գնմանց և վաճառմանց և պարտուց վճարման նկատմամբ 'ի գործ գրուած միջոցներն և արդիւնքը :

Ե. Յաջորդ տարուան ենթադրեալ ելմտացոյցն եւ ելեւմտից հաւասարակշռութեան համար 'ի գործ գրուած միջոցներն :

Յօդ. 34. - Տնօրէն ժողովոյ անդամք չ'են կրնար ստանձնել այն պաշտօնները , որք ծախսերու պատճառաւ իրենց համարառութեան ներքեւ կը գտնուին ,

ինչպէս նաեւ չ'են կրնար միանգամայն Տնօրէն ժողովոյ անդամ եւ Ընդհանուր ժողովոյ յատենապետ ըլլալ :

Իսկ եթէ երբէք ստանձնեն այնպիսի պաշտօն , կը դադրին նոյն միջոցին Տնօրէն ժողովոյ անդամակցութենէն :

#### Գ. ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Յօդ. 35. - Միաբանական Ընդհանուր ժողովոյ անդամ են Միաբանութեան բոլոր եկեղեցական անդամներն , մինչեւ 'ի Սարկաւազունս' 'ի միասին համարեալ :

Յօդ. 36. - Ս. Պատրիարքը կը նախագահէ Ընդհանուր ժողովոյ և 'ի բացակայութեան նորին պատրիարքական Փոխանորդը , իսկ Ս. Աթոռը թափուր եղած ժամանակ՝ Պատրիարքական Տեղապահը : Ընդհանուր ժողովը իր մասնաւոր դիւանն ունի Ատենապետէ , Ատենադպրէ և Փոխանորդներէ կազմեալ , զորս իր մէջէն կընտրէ գաղտնի քուէարկութեամբ՝ երկու տարի պաշտօն վարելու պայմանաւ :

Յօդ. 37. - Ընդհանուր ժողովն կը գումարի ,

Ա. Կոնստանտնուպոլէս երեք ամիսը մի անգամ հաշուոց քննութեան և տարեգլխոյն (Մայիս) Տնօր. ժողովոյ տարեկան համարառութիւնը առնելու և առ Ազգ. Երեսփոխանական Ընդհ. ժողովն իր համարը ներկայացնելու համար :

Բ. Պարահապէս երբ Ս. Պատրիարքը կամ Տնօրէն ժողովը մասնաւոր խնդրոյ մը համար հարկ տեսնեն , եւ կամ Ընդհանուր ժողովոյ Ս. Երուսաղէմի մէջ գտնուող անդամոց մէկ երրորդ մասը բացորոշ խնդրագրով հայցեն անոր գումարումը :

Յօդ. 38. - Ս. Պատրիարքը կամ Ս. Աթոռոյ թափուր

ժամանակ Տեղապահը՝ և Ս. Պատրիարքի բացակայութեան միջոցին՝ Պատրիարքական Փոխանորդը կը հրահրէ զանդամս ՚ի ժողով, ամեն անգամ՝ գէթ 24 ժամ առաջ զրկելով կոչնագրերը, որոց մէջ կը նշանակուի Օրակարգի խնդիրը:

Յօդ. 39. - Ս. Երևանոյ Միաբանական Ընդհանուր Ժողովոյ անդամոց թուոյն երկու երրորդ մասը բաւական է օրինաւոր ատեան կազմելու եւ ամեն խնդիր լուծելու, և ընտրութիւններն ընելու, բաց ՚ի Պատրիարքական ընտրելեաց եւ Տեղապահի ընտրութիւններէն, որոց համար Ընդհանուր Ժողովոյ Բոլոր անդամոց երկու երրորդ մասի մասնակցութիւնը անհրաժեշտ է:

Յօդ. 40. - Միաբանական Ընդհանուր Ժողովոյ պաշտօնն է:

Ա. Ընտրել Պատրիարքական ընտրելիները, ինչպէս նաեւ Տեղապահն ու Լուսարարապետը՝ և ըստ 29րդ յօդուածոյ Տնօրէն Ժողովոյ անդամները:

Բ. Միաբանական վարչութեան և նոյն իսկ իրեն համար մասնաւոր կանոնադրութիւններ հաստատել, կամ ՚ի պահանջել հարկին բարեփոխել, Տնօն Ժողովէն առաջարկեալ խնդիրները լուծել և անոր տեղեկագրին վրայ փոխառութեանց և Ս. Աթոռոյ սեփական կալուածոց վաճառման կամ գնման պէտքը վճռել և պայմաններն սահմանել, եկեղեցական Միաբանից անդամակցութեան ընդունելութիւնը որոշել, ձեռնադրութեանց առթիւ ընծայացուաց արժանաւորութիւնը քուէարկել, եկեղեցական Միաբանից ամբաստանութիւնը դատել, անոնց արտաքսումը արտաուանել, և ՚ի դէպս մահուան Պատրիարքի՝ նորա սեփական և Պատրիարքարանի գոյից վրայ եղած տնօրէնութիւնն լսել և վերջապէս Տնօրէն Ժողովէն համար առնուլ:

Յօդ. 41. - Ամեն տարեգլուխ Միաբանական Ընդհանուր Ժողովը Տնօրէն Ժողովոյ համարատուութեան Տեղեկագրին և Ելմտացոյցն ընդունելով՝ ստուգելէ և վաւերացնելէ յետոյ, իր կողմէն համարատուութեան Տեղեկագիր կ'ուղղէ առ Ազգային Երեսփոխանական Ընդհ. Ժողովն, մի առ մի նշանակելով ՚ի նմին 33րդ յօդուածի տրամադրութեան համաձայն՝ տարւոյն մէջ կատարուած վարչական, Տնտեսական, Ելմտական, Բարեկարգական տնօրէնութիւններն, ինչպէս և վերջացեալ տարւոյ հաշուեկշիռն եւ յաջորդին Ելմտացոյցը:

Գ Լ Ո Ի Խ Գ .

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԻ ԵՒ ՊԱՇՏՕՆԱԿԱԼՔ

Ա. ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏ

Յօդ. 42. - ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏԸ կընտրուի Միաբ. Ընդհ. Ժողովէն չորս տարի պաշտօնավարելու համար և վերընտրելի է: Լուսարարապետը իրբեւ համարատու՝ Տնօր. Ժողովոյ չէ կարող անդամակցիլ:

Լուսարարապետի պաշտօնն է,

Ա. Տնօրինական Ս. Տեղեաց, Ուխտատեղեաց և բոլոր եկեղեցեաց մէջ ՚ի սահմանս Ս. Երուսաղէմի՝ Աստուածային պաշտամանց ըստ կանոնի Հայ. Եկեղեցոյ կատարուելուն վերատեսչութիւնը, և

Բ. Յատուկ ցուցակազրութեամբ իրեն յանձնուած Ս. Աթոռոյ սեփական բոլոր եկեղեցական Սրբութեանց, անթոնց, զարդուց, զգեստուց, եկեղեցական գրեանց և այլ գոյից անկորուստ և անեղծ պահպանութիւնը:

Յօդ. 43. - Լուսարարապետին հսկողութեան ենթարկեալ են՝

Ա. ի մասին կարգապահութեան եւ եկեղեցական պաշտաման՝ Միաբանութեան բոլոր եկեղեցական անդամներն, և ՚ի մասնաւորի՝ ժամօրհնող, Խոստովանահարք, ժամասաց և ժամարար Վարդապետք, Սարկաւագունք և Դպիրք, Մասագործ և ժամակոչ, և

Բ. ի մասին աւանդապահութեան՝ բոլոր Լուսարարք և այլ սպասարկուք եկեղեցւոյ :

Յօդ. 44. - Ս. Աթոռոյ աւանդատան ինչպէս նաեւ զանազան Ուխտատեղեաց և Տաճարաց մէջ գտնուած բոլոր եկեղեցական անօթոց, զարդուց, զգեստուց, գրեանց և այլ գոյից մանրապատում կրկին Մայր-Տումարներէն մին Աւանդատան և միւսն Տնօրէն ժողովոյ Խորհրդարանին մէջ պահուելով՝ Լուսարարապետն Միաբանական Ընդհանուր ժողովով ընտրուելէն և սովորական արարողութեամբ Աւանդատան բանալին Ս. Գլխադրէն իր ձեռք առնելէն ետքը, ընտրուած մասնախումբին հետ (յօդ. 48) նոյն տումարներն, ինչպէս նաեւ իր նախորդի մասնաւոր Տումարն Աւանդատան վիճակին հետ բաղդատելով ինքը եւ Մասնախումբի անդամները անոնց մէջ կարճանագրեն իրենց գիտողութիւններն և կ'ստորագրեն :

Յօդ. 45. - Իւրաքանչիւր Լուսարարապետ իր ժամանակին համար մասնաւոր ժապաւինեալ Տումար մը կընդունի Տնօրէն ժողովէն վաւերացմամբ Ս. Պատրիարքի եւ անոր մէջ կ'արձանագրէ գիտակցութեամբ մասնաժողովի անդամոց մանրամասնաբար :

Ա. Ինչ նոր անօթ, զգեստ, զարդ և այլն որ յանձնուի իրեն յատենի Տնօրէն ժողովոյ, և՝

Բ. Ինչ փոփոխութիւն որ հարկ կը տեսնուի և Տնօրէն ժողովոյ որոշմամբ կը կատարուի Աւանդատան մէջ և դուրսը գտնուած անօթոց, զգեստուց և այլոց

վրայ ( նորոգութիւն, ձեւի փոփոխութիւն և այլն ), և ամեն մէկ արձանագրութեան ներքեւ ինքը կ'ստորագրէ Տնօրէն ժողովոյ Դիւանին եւ մասնախումբի անդամոց հետ :

Յօդ. 46. - Լուսարարապետը իրրեւ հսկող եւ պատասխանատու եկեղեցական եւ վանական կարգապահութեան, ստիպողական պարագայից մէջ, կրնայ անմիջական տնօրէնութիւն մ'ընել կարգապահութեան հակառակ վարուողներու նկատմամբ պայմանաւ որ իսկոյն տեղեկագրէ : Լուսարարապետը առանց Ս. Պատրիարքի եւ Տնօրէն ժողովոյ գիտութեան չը կարող ու է պաշտօնեայ իւր պաշտօնէն դադարեցնել :

Յօդ. 47. - Լուսարարապետը ամբաստանութեան կենթարկուի հետեւեալ պարագայից մէջ :

Ա. Երբ Տարեկան Քննիչ մասնախումբը իր քննութեանց պահուն երեւան հանէ այնպիսի կէտեր, որոնք իր հաւատարմութիւնը խնդրոյ նիւթ ընեն, ամբաստանագիրը կուղղէ առ Ս. Պատրիարքն իրրեւ Նախագահ Միաբանական Ընդհանուր ժողովոյ :

Բ. Ներկայ Միաբանից մէկ երրորդի ստորագրութեամբ կ'ամբաստանուի՝ ՚ի մասին եկեղեցական պաշտամանց, արարողութեանց եւ ծիսից ինչ որ Տօնացոյցի և Ս. Աթոռոյ հնամենի աւանդութեանց եւ սովորութեանց դէմ նոր կարգեր ու կանոններ սահմանել յաւակնի, և

Գ. Իր բարոյական կեանքը գայթակղութիւններ յարուցանէ Միաբանութեան մէջ եւ կարգապահութեան խանգարման տեղի տայ :

Այս երեք որոշ կէտերու վրայ Միաբանական Ընդհանուր ժողովը եզած ամբաստանութիւնները լսելէ վերջը, իրմէ կարգեալ դատական Յանձնաժողովոյ մը կը յանձնէ քննութիւնը և նորա տեղեկագիրը լսելէ յետոյ կարտասանէ վճիռը, որ կըլլայ կամ արդարաւ

ցում եւ կամ պաշտօնանկութիւն Լուսարարապետութեան :

Ամբաստանողը չ'են կրնար Դատական Յանձնաժողովոյ անդամ ընտրուիլ :

Յօդ. 48. - Երբ Լուսարարապետը վախճանի, քառասուն օր վերջը տեղի կունենայ նորին ընտրութիւնը, և Միաբանական Ընդհանուր Ժողովէն կարգեալ չորս անձէ բաղկացած Մասնախումբի մը հետ մտնելով Ս. Եկեղեցւոյ մեծ Աւանդատունը՝ Տումարաց համեմատ յանձնումը կը կատարուի (յօդ. 44) : Իսկ եթէ զանազան պատճառներով ընտրութիւնը երկարաձգի, նոյն Մասնախումբը պէտք եղած զգեստները, զարդերը և այլն դուրս հանելէ յետոյ՝ Աւանդատան գուռը կը կնքէ և բանալիները կը յանձնէ Ս. Պատրիարքին, և Տնօրէն Ժողովը կը կարգէ փոխ-Լուսարարապետ մը՝ որ առժամապէս կը պաշտօնավարէ ցընտրութիւն նորին :

#### Բ. ՊԱՏՐԻԱՐԿԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ՅԵՐՈՒՍՏՂԵՄ

Յօդ. 49. - Ս. Պատրիարքը կընտրէ իր Փոխանորդը Միաբանութեան առաջաւոր եւ ձեռնհաս անդամոց մէջէն :

Փոխանորդի պաշտօնն է, ըստ հրամանի և հրահանգի Ս. Պատրիարքի յարաբերական գործերը տնօրինել, և ՚ի բացակայութեան Ս. Պատրիարքի՝ նախագահել Ժողովոց և ստորագրել պաշտօնագրերը և թարգմանի կատարած յարաբերական գործոց հսկել :

#### Գ. ԵԼԵԻՄՏԻՑ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 50. - Ելեւմտից Տեսուչը կընտրուի Տնօրէն Ժողովէն և համարատու է նմա և պաշտօնն է՝ Ս. Աթոռոյ կանոնաւոր տնտեսութեան և համարակալութեան վերատեսչութիւնը :

Ելեւմտից տեսուչը երբէք Տնօրէն Ժողովոյ անդամ չը կրնար ըլլալ :

Յօդ. 51. - Ելեւմտից Տեսչի հսկողութեան ենթարկեալ են Ս. Աթոռոյ Դանձապետն եւ Համարակալն, որք նոյնպէս կընտրուին Տնօրէն Ժողովէն, և ՚ի մասին հաշուական գործողութեանց բոլոր պաշտօնակալք Միաբանութեան :

Յօդ. 52. - Ս. Աթոռոյ ելեւմուտքը ամեն տարի Տնօրէն Ժողովոյ առաջարկութեամբ՝ Միաբանական Ընդհանուր Ժողովով կը սահմանուի կանոնաւոր, եւ ըստ նոյն Ելմտացոյցի կը տնօրինուին ելմտական տնտեսութեան զանազան ճիւղերու պաշտօնակալաց ձեռք, որոց ամենուն գործառնութեանց կանոնաւորութեան կը հսկէ Ելեւմտից Տեսուչը. հակառակ պարագային իւր գրաւոր դիտողութիւններն կը ներկայացնէ Տնօրէն Ժողովոյն, որ պարտաւոր է նկատողութեան առնել զանոնք նորա խորհրդակցութեամբ, և ամիսը անգամ մը Ս. Աթոռոյ ելմտական վիճակը կը ներկայացնէ Տնօրէն Ժողովոյ :

Տնօր. Ժողովը երբ ուզէ կրնայ քննել դրամարկեղ վիճակը Ելեւմտից Տեսուչը արտօնեալ չէ իւր քով պահելու արժէթուղթերը եւ այլ արժեքաւոր իրերը : Արժեքաւոր թուղթերը իրեղէնները Տնօր. Ժողովոյ հսկողութեան տակ խորհրդարանին մէջ կը պահուին :

Յօդ. 53. - Ելեւմտից Տեսուչը Ելմտացոյցով նախասահմանեալ ուղղակի հասոյթից և ծախուց գանձումը և վճարումը կը յանձնարարէ Դանձապետին, իսկ Ելմտացոյցէ դուրս արտասովոր հասոյթից գանձումը և ծախուց վճարումը կը լինի Տնօրէն Ժողովոյ մասնաւոր որոշմամբ եւ Ս. Պատրիարքի պաշտօնագրով :

Յօդ. 54. - Ս. Աթոռոյ փոխառական գործողութիւնը Ելեւմտից Տեսչի ձեռամբ կը կատարուին ըստ որոշման և գրաւոր արտօնութեան Տնօրէն Ժողովոյ, իսկ Ելմտա-

ցոյցով նախատեսեալ բացէն դուրս ըլլալիք փոխա-  
ռութեանց պէտք և զայնմերը Տնօրէն ժողովոյ առա-  
ջարկութեամբ Միաբանական Ընդհանուր ժողովով կը  
վճռուին և կը սահմանուին :

Յօդ. 55. - Գանձուց պահպանութիւնը և մասնաւոր  
հաշուակալութիւնը յանձնուած է Գանձապետին, որ  
առանց գրաւոր հրամանի ելեւմտից Տեսչին ոչինչ կը  
վճարէ և կը գանձէ և համարատու է :

Յօդ. 56. - Ս. Աթոռոյ ելմտական գործողութիւնք  
կրկնատումարի օրինօք կ'արձանագրուին Համարակալի  
ձեռօք, որ ընդ հսկողութեամբ ելեւմտից Տեսչին եւ  
նորա գրաւոր հրամանին համաձայն գանձումներն  
ու վճարումները կ'արձանագրէ, հաշիւ կը տեսնէ բո-  
լոր պաշտօնակալաց հետ և համարատու է անոր :

Յօդ. 57. - Տնօրէն ժողովոյ մէջ լինելիք ամեն ելմ-  
տական տնօրէնութիւնք և հաշուական գործառնու-  
թիւնք ելեւմտից Տեսչին ներկայութեամբ կը լինին :

#### Դ. ԴԱՐՊԱՍԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ

Յօդ. 58. - Դարպասընկալն Դրամընկալ և Տումարա-  
կալ Վարդապետներով իբր Դարպասական Յանձնա-  
խումբ՝ մէկ տարուան համար Տնօրէն ժողովէն կընտ-  
րուին եւ ամենն ալ անմիջապէս վերընտրելի են, ի  
հարկին Դարպասական Յանձնախումբին օգնական-  
ներ կը նշանակուին Ս. Պատրիարքին հրամանաւ եւ  
Տնօրէն ժողովոյ որոշմամբ :

Յօդ. 59. - Դարպասընկալին պաշտօնն է՝ հսկել ուխ-  
տաւորաց պատշաճապէս հիւրընկալուելուն, ընդունիլ  
նոցա դարպասական նուէրներն, բռնել անոնց կանո-  
նաւոր հաշիւը և գոյացեալ արդիւնքն զիտութեամբ  
Ս. Պատրիարքին՝ Դրամընկալի ձեռամբ յանձնել ել-  
եւմտից Տեսչին :

Յօդ. 60. - Դարպասընկալին հսկողութեան ենթար-  
կեալ են՝ Դրամընկալ, Տումարակալ եւ Հիւրընկալ  
Վարդապետք, Սենեկապանն, Շորապահը և Պղնձա-  
պահը :

#### Ե. ԴՊՐՈՑԱՑ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 61. - Ձեռնհաս Դպրոցաց Տեսուչ մէկը կընտ-  
րուի Տնօրէն ժողովէն և իւր պաշտօնն է՝ Ժառանգա-  
ւորաց Վարժարանի, Երուսաղէմի երկսեռ Նախակր-  
թարանաց, Բեթղեհէմի և Յոպպէի Վարժոցաց Վերա-  
տեսչութիւնը :

Յօդ. 62. - Տեսչի հսկողութեան ենթարկեալ են՝  
Ժառանգաւորաց Վարժարանի եւ Նախակրթարանաց  
ու Վարժոցներու Ուսուցիչները և բոլոր ծառայողները :

Յօդ. 63. - Դպրոցաց Տեսուչը Տնօրէն ժողովէն ընտ-  
րուած երկու անձէ բաղկացեալ Ուսումնական Խոր-  
հուրդին չորս անդամոց հետ և ըստ որոշման Տնօրէն  
ժողովոյ՝ կը տնօրինէ Ժառանգաւորաց Վարժարանի,  
երկսեռ Նախակրթարանաց եւ Թեմական Վարժոցաց  
վերաբերեալ գործերը և խնդիրները : Ներքին կրթա-  
կան խնդրոց կարգադրութեան պարագային Ուսուց-  
չական Մարմինն ալ խորհրդակցութեան կը հրաւի-  
րուի :

Յիշեալ Ուսումնական Խորհուրդը պաշտօն ունի  
նաեւ հսկելու Տպարանի և Գրադարանաց վերաբե-  
րեալ գործերուն վրայ :

Յօդ. 64. - Ժառանգաւորաց վարժարանը կը կառա-  
վարուի հետեւեալ հիմնական ծրագրոյն համեմատ,

Աշակերտք արդէն նախակրթեալք կընդունուին ընտ-  
րութեամբ իբր Ժառանգաւորք Եկեղեցւոյ 16 էն մին-  
չեւ 18 տարեկան, մի կողմէն կուսանին

1. Հայաստանեայց Եկեղեցւոյ վարդապետութիւնը .
2. Եկեղեցական իրաւաբանութիւն .

5. Ընդհանուր կրօնադիտութիւն .

4. Կեզուադիտութիւն - Հայերէն , Տաճկերէն , Գաղղիերէն և Անգլիերէն .

5. Քանկադիտութիւն - Թուաքանութիւն կատարեալ . Գրահաշիւ , Տարերք երկրաչափութեան եւ Տօմարկալութիւն .

6. Պատմութիւն - Սրբազան , եկեղեցական , Ս. Երուսաղէմի , Աշգաշին և ընդհանուր՝ հանդերձ Օսմանեան պատմութեամբ .

7. Երգեցողութիւն - Հայ Զայնագրութեամբ .

8. Աշխարհագրութիւն - ընդհանուր և Օսմանեան .

9. Տիեզերագրութիւն .

10. Գեղագրութիւն , գծագրութիւն և նկարչութիւն .

11. Տարերք Բնական Պատմութեան և գիտութեանց .  
յետ աւարտման Դպրոցական շրջանին՝ քաղաքացիական ընծայարանի մէջ կը շարունակեն իրենց ուսումը և հետզհետէ կը բարձրանան եկեղեցական աստիճանաց մէջ , իսկ մնայեալներն իրենց կարողութեան համեմատ զանազան գործերու մէջ կը գործածուին ըստ կանոնագրի Միաբանութեան :

2. ԴԻԻԱՆ

Յօդ. 65. - Դիւանապետը Տնօրէն Ժողովէն կընտրուի և պաշտօնն է ճշտութեամբ պատրաստել Ժողովոյ ատենագրութիւնները օրը օրին՝ առաջնորդութեամբ նորա Դիւանին և եղած որոշմանց համեմատ պաշտօնական թղթակցութիւններն և Դիւանական արձանագրութիւններն ընել :

Յօդ. 66. - Դիւանատան ամեն կարեւոր գրերը և արձանագրութիւնները կը պահպանուին կանոնաւորապէս ցուցակագրեալ՝ ընդ հսկողութեամբ և պատասխանատուութեամբ Դիւանապետին : Բայ 'ի Տնօրէն Ժողովոյ Ատենապետէն և Ատենադպրէն ուրիշ ոք չէ կարող

Դիւանատուն մտնել , գրերը կամ տուժարները պրպտել , և Դիւանատունէն օր և է գէր կամ տուժար պէտք չէ դուրս ելնէ նոյն իսկ Դիւանապետի ձեռամբ :

Յօդ. 67. - Դիւանապետի պաշտօնին կը վերաբերի՝ Տնօրէն Ժողովոյ որոշմամբ և Ս. Պատրիարքի հրամանաւ ունենալ և պահել լիակատար և ճշգրիտ Մայր-Տուժարներ ա. Ս. Աթոռոյ ամեն տեսակ և ամեն տեղ ունեցած կալուածոց և դետիններուն . Բ. Հաստատուն կտակաց և Գ. Վախճանիալ Միաբանից Թողած կայից և գոյից :

Յօդ. 68. - Դիւանատան պաշտօնեայք իրենց շրինաւոր պաշտօնավարութեան մասին պատասխանատու են Դիւանապետին :

Է. ԹԱՐԳՄԱՆ

Յօդ. 69. - Թարգմանը Տնօրէն Ժողովէն ընտրուելով իր պաշտօնը կը վարէ ընդ իշխանութեամբ Ս. Պատրիարքին եւ ընդ հսկողութեամբ Փոխանորդին՝ համաձայն հրահանգաց Տնօրէն Ժողովոյ :

Յօդ. 70. - Թարգմանը գործադիր է յարաբերութեանց ընդ Տեղական Կառավարութեան , ընդ օտարազգի վանորայս եւ պաշտօնեայս , եւ հսկող է բարեկարգութեան քրճազգեսաց Միաբանից , Ուխտաւորաց և Երուսաղէմի Հայ Ժողովրդոց և միանգամայն կ'անդամակցի Կառավարութեան Խորհէ Ժողովոյն՝ ի դիմաց Ս. Պատրիարքի :

Յօդ. 71. - Տնօրէն Ժողովոյ մէջ ընդ Տեղական Կառավարութեան և ընդ օտարազգի վանորայս և պաշտօնեայս ըլլալիք ամեն յարաբերական Տնօրէնութիւնք Թարգմանի ներկայութեամբ տեղի կուեննան , եւ Թարգմանի ձեռամբ ըլլալիք ելմտացոյցով նախատեսեալ ամեն յարաբերական ծախք ըստ հրահանգի Տնօրէն Ժողովոյ կը կատարուին :

## Ը. ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ՄԱՍՆԱԽՈՒՄԲ

Յօդ. 72. - Կալուածական Մասնախումբը կը բաղկանայ հինգ անդամներէ, որոց մին է օրուան Ելեւմտից Տեսուչը և միւսները կընտրուին Տնօրէն Ժողովէն, և ամենքը համարատու են անոր:

Կալուածական Մասնախումբի պաշտօնն է Ս. Երուսաղէմի մէջ գտնուած կալուածոց փոխառութիւնը և Ս. Երուսաղէմէն դուրս գտնուածներուն տնտեսութեան Վերփոխութիւնը:

Յօդ. 73. - Կալուածական Մասնախումբը վարձու կուտայ Ս. Երուսաղէմի մէջ գտնուած կալուածները, իւրաքանչիւր վարձակալի հետ Տնօրէն Ժողովոյ որոշման համաձայն և ըստ քաղաքական օրինաց պայմանագիր կնքելով և կը հսկէ հաստատեալ պայմաններու գործադրութեան, մասնաւոր նորոգութեանց և վարձքերու հաւաքման, որ կը կատարուի յատուկ պաշտօնեայի մը ձեռամբ. իսկ դուրսերը նոյն գործերը կը կատարէ Տեսչաց և Գործակալաց միջոցաւ:

Յօդ. 74. - Ամեն նոր շինութեանց և կարեւոր նորոգութեանց համար Կալուածական Մասնախումբը ըստ հրահանգի Տնօրէն Ժողովոյ կանխաւ յատակագրիներ և նախահաշիւներ պատրաստել կուտայ արժանահաւատ և մասնագէտ ճարտարապետներու՝ միշտ նուազուրդի գրութեամբ, եւ կը ներկայացնէ Տնօրէն Ժողովոյ, որ կորոշէ և կարտօնէ գործադրութիւնը:

Յօդ. 75. - Կալուածական Մասնախումբը կալուածոց վարձքերէն բնաւ ստակ չ'պահեր իր քով, ընդունածը առ օրին կը յանձնէ Ելեւմտից Տեսչին հրամանաւ Փանձապետին:

Յօդ. 76. - Կալուածական Մասնախումբը կունենայ յատուկ Տումար մը, որուն մէջ կարձանագրէ վարձատուութեանց, նորոգութեանց, շինութեանց և այլն

մասին եղած տնօրէնութիւններն և 'ի գործ գրուած միջոցներն:

## Թ. ԹԱՆԳԱՐԱՆ

Յօդ. 77. - Ս. Աթոռոյ Թանգարանը՝ ձեռագիր եւ տպեալ մատեաններով, հնագիտական նիւթերով եւ բնական պատմութեան, գիտութեան եւ գիշարուեստից վերաբերեալ առարկաներով օժտեալ՝ հանդերձ իւր ընթերցարանով՝ Տնօրէն Ժողովէն ընտրուած Թանգարանապետի մը տնօրէնութեան և նոյն Ժողովէն սահմանեալ յատուկ հրահանգի համաձայն և Ուսումնական խորհուրդի անմիջական հսկողութեան ներքեւ կը տնտեսուի (յօդ. 63): Ազգին եւ Միաբանական Ուխտին օգտակար ըլլալու եղանակաւ:

Յօդ. 78. - Ամեն տեսակ գրեանց՝ ձեռագիր թէ տպագիր, ըստ որակին և ըստ քանակին մանրամասն արձանագրութեան տուեմաներն յպիտի լինին և նոր ստացուածներն ըստ կարգին արձանագրուին: Մատենագարանէն կամ Թանգարանէն ձեռագիր և հնութիւն դուրս չեն ելներ կամ հեռու տեղեր չեն ղըրկուիր. փափագողք կրնան Թանգարանին մէջ կարգաւ կամ ուսումնասիրել:

## Ժ. ՏՊԱՐԱՆ

Յօդ. 79. - Ս. Աթոռոյ Տպարանը՝ հանդերձ գրավաճառութեան սենեկով, Տպարանապետի մը և Ուսումնական խորհուրդին հսկողութեան յանձնուելով, Տնօրէն Ժողովը կը հսկէ, և Ազգին և Միաբանական Ուխտին բարոյապէս և նիւթապէս օգտակար ըլլալու կերպով տնտեսուելուն:

Յօդ. 80. - Սոյն սկզբամբ Տպարանապետը Տնօրէն Ժողովոյ որոշմամբ և Ս. Պատրիարքի հրամանաւ կը տըպագրէ միայն այն գրքերը՝ որ կրօնից և Բարոյականի

դէմ ոչինչ չեն պարունակեր, և որ՝ (եթէ դուրսէն ծախքերը վճարելով ապսպրուած չեն) ղիւրամատչելի գնով կրնան չափաւոր ժամանակի մէջ ծախուիլ չահաւոր եղանակաւ :

### ԺԱ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍՆԱԽՈՒՄԲ

Յօդ. 81. - Տնտեսական Մասնախումբը կը բաղկանայ չորս անդամներէ, որոց մին է օրուան Ելեւմտից Տեսուչը, երկրորդը՝ Մատակարարը և միւս երկուքը կընտրուին Տնօրէն Ժողովէն շուրջ առնելով պատասխանատու են անոր :

Յօդ. 82. - Տնտեսական Մասնախումբի պաշտօնն է՝ Ա. Միաբանութեան, Բեթղեհէմի վանուց և Ս. Յաբութեան Տեսչութեանց տարեկան մեծաքանակ գնումները կատարել (ցորեն, իւղ, պանիր, վառելիք եւ այլն պարէնք), ինչպէս նաեւ Եկեղեցեաց, Մումատան, Հանդերձատան, Դպրոցաց, Տպարանի և Դեղարանի պիտոյքները (ձէթ, մեղրամոմ, չորեղէն, դեղ, թուղթ, կաշի և այլն) ժամանակին և պէտք եղած չափով առնել և ամբարել միշտ նուազորդի դրութեամբ, միանգամայն հսկել որ իւրաքանչիւր պաշտօնեայ իւր պաշտօնը հաւատարմաբար և ըստ օրինի կատարէ :

Բ. Խոհանոցի, Սեղանատան, Մառանի, Փուռի, Յորենատան, Մումատան, Հանդերձատան և Դեղարանի մաքրութեան և բարեկարգութեան հոգ տանիլ :

Գ. Ս. Աթոռոյ բոլոր Միաբան (Եկեղեցական եւ Բրձաղաթեաց) հիւանդ և ծեր անդամոց անխտիր խնամք և դարման տանել :

Յօդ. 83. - Մատակարարը ինչպէս նաեւ բոլոր միւս Տեսուչները և պաշտօնեայք առանց Տնտեսական Մասնախումբի գիտութեան չեն կարող ոչ մի կարելոր գնում ընել : Մատակարարի անմիջական հսկողութեան

ենթարկեալ են Խոհարարները, Սեղանապետները, Հացագործները և Սրճեփը :

### ԺԲ. ՀԱՆԴԵՐԺԱՊԵՏ

Յօդ. 84. - Հանդերձապետը կընտրուի Տնօրէն Ժողովէն, և իւր պաշտօնն է՝ ընդ հսկողութեամբ Տնտեսական Մասնախումբի՝ Միաբանութեան տարեկան հազուստը ըստ որոշեալ տարազու եւ քանակութեան պատրաստել եւ Հանդերձարանի վերաբերեալ ամեն նիւթերը խնամքով և հոգատարութեամբ պահպանել : Հանդերձապետը առանց Տնտեսական Մասնախումբի որոշման և հաւանութեան չէ կարող ո՛ր և է գնում ընել :

### ԺԳ. ՄՈՄԱԳՈՐԾ ԵՒ ՄՈՄԱՎԱՃԱՌ

Յօդ. 85. - Մումագործութիւն եւ Մումավաճառութիւնն Տնօրէն Ժողովոյ կողմէ մասնաւոր պաշտօնակալաց կը յանձնուին եւ Տնտեսական Մասնախումբի հսկողութեան ենթարկեալ են :

Մումագործ եւ Մումավաճառ պարբերաբար հաշիւ կը ներկայացնեն Ելեւմտից Տեսչին :

### ԺԴ. ԲԺԻՇԿ ԵՒ ԴԵՂԱԳՈՐԾ

Յօդ. 86. - Հիւանդ Միաբանից եւ Տեղացի աղքատ աղջայնոց այցելութեան հոգն ու խնամքը Տնօրէն Ժողովոյ կողմէն Բժշկին և Դեղարանի տնտեսութիւնը՝ Դեղագործին կը յանձնուի ընդ հսկողութեամբ Տնտեսական Մասնախումբին, որ անոնց ճշդիւ և կանոնաւորապէս կատարուելուն կը հսկէ :

Բժիշկ և դեղագործ կը վարուին Տնօրէն Ժողովէն տրուած մասնաւոր հրահանգաց համաձայն :

### ԺԵ. ՊԱՏՐԻԱՐԿԱԿԱՆ ՓՈՒՍԱՆՈՐԴ Ի Կ. ՊՈԼԻՍ

Յօդ. 87. - Պատրիարքական Փոխանորդն Ս. Աթոռոյ ներկայացուցիչն է ի Կ. Պոլիս, միջնորդ յարաբերու-

թեանց ընդ երկուս Աթոռս Պատրիարքականս, Տեսուչ կալուածոց եւ Գործադիր Պատրիարքական եւ վարչական յանձնարարեալ Աթոռապատկան ամեն գործոց:

Յօդ. 88. - Պատրիարքական Փոխանորդն Ս. Պատրիարքի առաջարկութեամբ կընտրուի Տնօրէն ժողովէն, որմէ կընդունի իւր հրահանգներն եւ պատասխանատու է անոր:

### ԺԶ. ՏԵՍՉՈՒԹԻԻԻԲ

Յօդ. 89. - Տեսուչները Ս. Աթոռոյ ներկայացուցիչներն են իրենց պաշտօնավարութեան յատկացեալ տեղեաց մէջ, եւ կը վարուին մասնաւոր հրահանգաց համեմատ, զոր Տնօրէն ժողովը կուտայ պաշտօնի կոչած ժամանակ, ըստ հաստատութեան Ս. Պատրիարքի:

Յօդ. 90. - Տեսուչներն, ինչպէս նաեւ Փոխանորդն 'ի Կ. Պոլիս իրենց Տեսչութեան ենթարկեալ Միաբանից եւ Պաշտօնակալաց (Ժամարար, Սարկաւագ, Դպիր, Թարգման, Պահակ, Ճողի եւ այլն) պաշտօնավարութեան հսկող եւ պատասխանատու են առ Տնօրէն ժողովն:

### ԺԷ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻԻԻԻԲ ԵՒ ԳԱՆՁԱՊԵՏՈՒԹԻԻԻԻԲ

Յօդ. 91. - Այն տեղերը, ուր կարելի չէ Միաբանութենէն յատուկ եկեղեցական Տեսուչներն դնել, պատուաւոր եւ վստահելի Ազգայիններէ բաղկացեալ Գործակալ Մասնաժողովներ կը կարգուին որոշմամբ Տնօրէն ժողովոյ, եւ Ս. Պատրիարքի հաստատութեան Կոնդակաւ, նոյն վիճակին մէջ եղած Ս. Աթոռոյ կալուածոց Տեսչութիւնն ընելու եւ իրենց յանձնարարեալ ուրիշ Աթոռապատկան գործերը կատարելու համար:

Յօդ. 92. - Իանձապեաք նոյնպէս կընտրուին Տնօրէն ժողովէն եւ կը հաստատուին Ս. Պատրիարքի Կոնդա-

կաւ, եւ պաշտօն ունին իրենց գտնուած տեղւոյն եւ վիճակին եկեղեցեաց մէջ, յանուն Ս. Երուսաղէմի շրջազայած գանձանակներու արգիւնքն հասցնել 'ի Ս. Աթոռն, իրենց տրուած հրահանգաց համեմատ:

### ԺԸ. ԱՅՑԵԼՈՒՔ ԵՒ ՆՈՒԻՐԱԿԻ

Յօդ. 93. - Այցելուք եւ Նուիրակք մասնաւոր Պաշտօնակալք են որք կը զրկուին Ս. Աթոռոյ կողմէ առթառայ պաշտօնով պէտք եղած տեղուանք, եւ կը վարուին ըստ հրահանգաց, զոր կընդունին Տնօրէն ժողովէն պաշտօնի կոչուած ժամանակ:

Հրահանգներն եւ իրենց յանձնուած ժապաւինեալ մատեանները Ս. Պատրիարքի վաւերացումը կը կրեն:

### Գ Լ ՈՒ Խ Գ.

### ՎԱՐՉԱԿԱՆ ԸՆԹԱՅԻ

Յօդ. 94. - **Ս**ՄԵՆ պաշտօնական նամակ եւ խնդրագիր Ս. Պատրիարքին կուղուին, որ Դիւանատուն կը յանձնէ յորձանագրութիւն եւ ապա կը յղէ պատկանեալ ժողովին 'ի տնօրէնութիւն. իսկ այն գրերը որք նախաքննութեան կը կարօտի, ժողովին յղելէ առաջ կը յանձնէ պատկանեալ Դիւանատան Մարմնոյն կամ Պաշտօնէին միջոցաւ, 'ի նախաքննութիւն եւ 'ի տեղեկագրութիւն:

Յօդ. 95. - Թէ Միաբանական Ընդհանուր ժողովոյ եւ թէ Տնօրէն ժողովոյ որոշումները պարունակող գրութիւնք կ'ստորագրուին Ս. Պատրիարքէն, միայն թէ Ընդհանուր ժողովոյ պաշտօնագիրք պիտի կրեն նաեւ Դիւանի ստորագրութիւնն:

Յօդ. 96. - Ընդհանուր և Տնօրէն ժողովոց որոշումներն կը գործադրուին Ս. Պատրիարքի կողմէն համաձայն նոցա արձանագրութեանց և որոշմագրոց : Եթէ Ս. Պատրիարքը Տնօրէն ժողովոյ որոշման արակարծիք գտնուի, երկրորդ անգամ հրաւէր կը կարգայ ժողովոյն միանգամ եւս խորհրդածել նոյն խնդրոյն վրայ և եթէ դարձեալ համայնախորհրդանոց, խնդիրը կը յանձնէ Միաբանական Ընդհանուր ժողովոյն, և եթէ սորա որոշումն ալ չընդունի եւ չը գործադրէ, այն ատեն խնդիրն կը տեղեկագրուի աւ Ազգային Երեսփոխանական ժողովն, որուն որոշումը վճռական է և անպայման գործադրելի :

Գ Լ Ո Ւ Խ Ե .

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Յօդ. 97. - ՍՈՅՆ Կանոնադիրը վերաքննելի է Ազգային Երեսփոխանական ժողովով վաւերացման օրէն հաշուելով եօթը տարի ետքը, և վերաքննութիւնը Միաբանական Ընդհանուր ժողովով կը կատարուի և 'ի ձեռն Կեդրոնական Վարչութեան՝ Ազգային Երեսփոխանական ժողովոյ կը մատուցուի 'ի վաւերացումն :

Յօդ. 98. - Մինչեւ վերաքննեալ կէտերուն Ազգային Երեսփոխանական ժողովի կողմէ վաւերացումը, հին տրամադրութիւնք անփոփոխ 'ի գործադրութեան կը պահուին :




ՀՀ Ազգային գրադարան



3037 NL0030060

3092

5



leaf

11

3001